

ճի, որուն պաշտօնավարութեան վախճանը յայտնի չէ :  
Իրմէ յետոյ կը յիշուի Պետրոս կաթողիկոս, որ 1670-  
ին վախճանած է : Ասկէ վերջ կը յիշուի 1677ին կա-  
րապետ Քոնստ կամ Քրջած :

Արդ, Յովնաննէս Թիւթիւնճի պէտք էր 1667-  
էն 1675(1) ութ տարիներու ժամանակամիջոցին կա-  
թողիկոս եղած ըլլար Ազիւսմարի, կամ յաջորդելով  
Մարտիրոս Գաւրճիի և կամ Պետրոս կաթողիկոսի  
(1670) և կամ աննոցմէ մէկուն աթոռակից եղած ըլլար :

Ուշիշ կերպ կարելի չէ մեկնել, վասնզի Վանի  
իր սուաջնորդութիւնն ալ այդ թուականներուն կը  
գուգայրիպի(2) :

(1) Քանի որ, ինչպէս տեսնուեցաւ, 1675ին Վանէն հեռացած  
էր արդէն :

(2) Համոզուելու համար՝ կր բաւէ ակնարկ մը նետել Վանի  
առաջնորդներու եւ Վարազի վանահայրերու շարքին վրայ, սկսած  
ժ.կ. դարու սկիզբէն :

1596—1606. Ստեփաննոս եպ. (Ազգ. Հանդէս, ԻԱ. հս. էջ 71-  
Բիւզանդիոն, ք. 2324) :

1606—1608. Չախարիա եպս. Վանեցի Գէոյեան, Բիւզան-  
դիոն, ք. 2324 :

1608--1634. Մարտիրոս վրդ. Վանեցի, Արահու. (Յուցակ  
Վասպուրակ. Չեռագրաց, էջ 853—4. Աղաւ-  
նուհի, Միաբանք, էջ 274. Գարանազի, Երու-  
սաղէմի ձեռագիր, ք. 11) :

1654—1660 Պօղոս Արքեպ. (Ազգ. Հանդէս, ԻԱ. էջ 72. Յու-  
ցակ Վասպ. էջ 836. Լոյս, 1905, էջ 663) :

1675— . . . Յովասափ վրդ. Ղազանցի. (Ազգ. Հանդէս, ԻԱ.  
էջ 83) :

1679—1690 մռ. Կարապետ վրդ. Կալոյ Մոկացի (Յուցակ Վաս-  
պուրակահի, էջ 930, Յուցակ Թօփնեան, Բ. 58) :

Յովնաննէս Թիւթիւնճի պաշտօնավարած պէտք է ըլլայ կամ  
1647—1654ի միջոցին ինչ որ չէր կրնար իրանի որ Վանէն հեռու  
Պոլիս եւ Երզնկային էր եւ կամ 1660—1675ի միջոցին՝ ինչ որ աստ  
հուսանակահ է :